ՎԱԼԴԵՄԱՐ ՑՈՐՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՄԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԾՈ ԾՐԱԳԻՐԸ

ՎԱԼԴԵՄԱՐ ՑՈՐՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՄԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԾՈ ԾՐԱԳԻՐԸ

ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

ՎԱԼԴԵՄԱՐ ՑՈՐՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՄԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԾՈ ԾՐԱԳԻՐԸ

Խմբագիր՝ *Սուրեն Հարությունյան*
Թարգմանիչ և սրբագրիչ՝ *Թամարա Լամբրիանովա*
Համակարգչային ձևավորող՝ *Տատյանա Կրուկ*
Նկարազարդում www.shutterstock.com

Հրատ. № 08.539
ISBN 978-3-944972-31-8

© Լույս Արևելքում, 2016

ՑԱՆԿ

Ի սկզբանե 5
Եվ Աստված զղջաց 11
Արարատից մինչև Բաբելոն 17
Նախահայրերի ժամանակաշրջանը 23
Լույս սարի վրա 29
Խառնակ հազարամյակը 35
Ժամանակի լրումը 41
Հարության վկաների ժամանակաշրջանը 47
Երկնքում գրվածները 53
Մի քանի խորհուրդ փրկություն փնտրողին . . . 59

Ի ՍԿԶԲԱՆԵ

«Եվ ՏԵՐՆ ասաց Մովսեսին. «Սա գրի՛
առ գրքում՝ որպես հիշատակ...» »:

Ելից 17:14

Երբ դեռ գոյություն չուներ Տիեզերքը, որի մեծությամբ, գեղեցկությամբ և անհասանելի տարածություններով մենք հիանում ենք, երբ չկար ո՛չ լույսը, ո՛չ ինքը՝ ժամանակը, Աստված, բյուրավոր հրեշտակներով շրջապատված, կայացրեց որոշում՝ վերաբերվող յուրաքանչյուր մարդու, ով ապրել է, ապրում է և դեռ պիտի ապրի Երկրի վրա: Որոշում այն մասին, որ հավիտենության վեհությունն ու անհասանելի երանությունն Ինքը ցանկանում է կիսել մարդկանց բազմության հետ: Ի՞նչը Նրան դրդեց այդ մտքին: Մենք կարող ենք միայն ենթադրել: Աստծո խոսքից մենք գիտենք, որ Աստված սեր է, իսկ սերը միշտ կամենում է կիսվել նրանով, ինչ ունի:

Ամեն դեպքում, Աստված գիտեր, թե դա ինչ կարժենար Իրեն: Նա ամենագետ է: Նա գիտեր, թե ինչ կարժենար Իր համար այն ազատությունը, որով Ինքն օժտել էր Իր ստեղծագործություններին: Սակայն հավասարի պես կարելի է շփվել միայն նրանց հետ, ովքեր ազատ են: Դեռ գոյություն չուներ մարդը, երբ իր ազատությունից օգտվեց լույսի հրեշտակը և ընդվզեց Աստծո դեմ: Եվ ապագա մարդկության համար ընտրության հնարավորություն ստեղծվեց:

Ի սկզբանե Աստված ողջ տեսանելի աշխարհը ստեղծեց որպես օրրան՝ ապագա մարդկության համար: Գալակտիկաներն ու համաստեղությունները, մոլորակներն՝ իրենց արբանյակների հետ միասին

ստեղծելիս, այդ ամենը Տիեզերքի անչափելի տարածության մեջ տեղադրելիս Աստված նկատի է ունեցել նրանց, ովքեր պետք է նայեն աստղազարդ երկնքին և մտածեն Իր մասին: Նա նկատի է ունեցել ինձ և քեզ:

Երկիրը, բնությունը, բուսական և կենդանական աշխարհը ստեղծելիս Աստված մտածել է մեր՝ մարդկանց մասին, ում հետ ցանկանում է անցկացնել հավիտենականությունը:

Ադամին ու Եվային ստեղծելիս Աստված գիտեր, թե նրանք ինչպես կվարվեն իրենց տրված կյանքի և ընտրության ազատության հետ: Նա ոչ միայն գիտեր, այլև արեց ամեն բան, որ նրանք ունենան այդ ընտրության հնարավորությունը: Նա Ինքը՝ Իր ձեռքով, տնկեց հրաշալի պարտեզը, այնտեղ բնակեցրեց առաջին զույգին և նրանց հետաքրքրքիր և կարևոր առաջադրանք տվեց. խնամել և պաշտպանել այգին:

«Եվ ՏԵՐ Աստված երկրից բուսցրեց…պարտեզի մեջտեղում՝ կենաց ծառը, և բարին ու չարը գիտենալու ծառը»: Եվ Աստված արգելեց մարդուն ուտել բարու ու չարի գիտության ծառի պտուղը, այսինքն, Աստված մարդուն ընտրության հնարավորություն տվեց:

Ինչու՞ Աստված արեց դա: Եթե չլիներ այդ ծառը, մենք մինչ օրս դրախտում կապրեինք: Չգիտե՛մ, չգիտե՛մ… Բայց գիտեմ, որ տարբերություն կա մանկան անմեղության և հասուն մարդու սրբության միջև: Աստված մարդուն տվեց ազատ կամք, որպեսզի նա կարողանա փորձվել. փորձության ենթարկվելով՝ անմեղությունը վերածվում է սրբության: Աստված

կամենում էր հավիտենության մեջ Իր կողքին սրբեր ունենալ, քանի որ Ինքը սուրբ է:

Այն փաստը, որ Աստված մարդուն ազատ կամք է տվել, հատկապես վառ արտահայտված է Եդեմի պարտեզում՝ Եվայի գայթակղության պատմության մեջ: Աստված չբռնեց Եվայի ձեռքը, ինչպես մենք կվարվեինք մեր երեխաների հետ. «Չի՛կարելի: Չէ՞ որ ես քեզ ասել էի, որ այս պտուղները չի՛ կարելի ուտել»: Նա անչափ հարգում է մարդու ազատությունը, թեև գիտի, թե ինչ է արժենում այդ ազատությունն Իր համար. «Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհնությունով երկնավոր բանե-ռումը Քրիստոսով: Ինչպես որ ընտրեց մեզ նրանով աշխարհի ստեղծելուցն առաջ, որ մենք սուրբ և անարատ լինենք նրա առաջին սիրով» (Եփես. 1: 3-4, Արևելահայերեն թարգմանություն): Աշխարհի ստեղծումից առաջ անսկիզբ Աստծո Որդին գիտեր, որ պետք է խաչին զամվեր անարգված, ծեծված և խայտառակված՝ վճարելով մեր ազատության գինը:

Մեղք գործածներին Եդեմից արտաքսելով՝ Աստված Քերովբեներին դրեց բոցեղեն սրով այն պահպանելու համար: Ես կարծում եմ, Նա ստեղծեց «ժամանակ» ֆենոմենը (երևույթը, խմբ.), որպեսզի մարդիկ չմնային ընկած վիճակում, այլ ժամա-նակի ազդեցությանը ենթակա լինելով («մահով պիտի մեռնես»), հնարավորություն ունենային Քրիստոսի փրկագնի միջոցով տեղափոխվելու հավիտենություն, որի համար և ստեղծվել էին: Այդ մասին ասում է Աստծո Խոսքը «Բայց մենք՝ հավատացյալներս, մտնում ենք այն հանգստի

մեջ (համատեքստում՝ արարման յոթերորդ օրը)» (Եբր. 4:3): Շաբաթը Աստծո երկնային հանգստի երկրային արտացոլումն է, Նրա «հանգստի օրը» մեզ բոլորիս համար մշտական հիշեցում է հավիտենականության մասին, որի համար մենք ստեղծվել ենք, հիշեցում՝ կորսված դրախտի, այնտեղ վերադառնալու հնարավորության, մեր ընտրության ազատության համար վճարված գնի և Հիսուս Քրիստոսի քավչարար զոհն ընդունելու մեր հնարավորության մասին: Այն մեզ հիշեցնում է Տիեզերքի նպատակը. մենք կանչված ենք անձամբ Արարչի հետ սիրո հաղորդակցության:

ԵՎ ԱՍՏՎԱԾ ՀՐՁԱՅ

«Եվ ՏԵՐՆ ասաց. «Իմ հոգին մարդի
վրա միշտ չմնա...» »:

Ծնն. 6:3

ԱՐԱՐԱՏ

Եվ ահա, կանգնած են նրանք՝ Երկրի առաջին մարդիկ, և չեն համարձակվում նայել ճաճանչափայլ բազմաթև Քերովբեներին և կրակե գընդին, որ փակել են նրանց ճանապարհը դեպի Եդեմ: Վե՛րջ, ամեն բան կորած է. թե՛դրախտը, թե՛ հավիտենականությունը, թե՛ շփումն Աստծո հետ… Ընտրությունը կատարված է: Որոշումն անդառնալիորեն ընդունված է. մահով կմեռնես:

Արտաքսումը դրախտից և մարդու ենթարկվելը մահվան և ժամանակի օրենքին՝ Աստծո օրհնության առաջին տեսանելի դրսևորումն էր: Ադամն ու Եվան արտաքսվեցին Եդեմից, որպեսզի հավերժ չմնան ընկած վիճակում, որպեսզի հույս ունենան: Աստված ասաց. «Ահա Ադամը դարձավ ինչպես մեզնից մեկը, որ բարին ու չարը գիտենա, և հիմա մի գուցե իր ձեռքը մեկնի և կենաց ծառից էլ վերցնի և ուտի ու հավիտյան ապրի» (Ծնն. 3: 22): Մեղքի համար մարդուն մահով պատժելով, զրկելով նրան այդ վիճակում հավերժ ապրելու հնարավորությունից՝ Աստված մեծ շնորհ արեց նրան: Պատկերացրե՛ք, հավիտյան ապրել ընկած վիճակում: Ինչպես սատանան: Ինչպես նրա հրեշտակները:

Մարդը Եդեմից երեք մեծագույն օրհնություններ վերցրեց իր հետ. ամուսնության ինստիտուտը («…Եվ կհարի իր կնոջը և երկուսը մեկ մարմին կլինեն»), առաջին խոստումը կամ մարգարեությունը Փրկչի՝ սատանայի թշնամու մասին («Եվ

ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը և քո սերունդի և նրա սերունդի մեջտեղը») և հնարավորություն՝ կյանքի ընթացքում հավատով ընտրություն կատարելու և «մահից դեպի կյանք տեղափոխվելու»:

Մեղքը չմնաց Եդեմում, այլ բնակություն հաստատեց մարդու սրտի մեջ և արտահայտվեց նախանձի, չարության ու սպանության միջոցով: Մարդն իր էությամբ մեղավոր դարձավ: Ինչպես առաջին մարդը՝ Ադամը, դարձավ առաջին մեղավորը, այդպես և նրա առաջին որդին դարձավ առաջին մարդասպանը: Ծննդոց գրքի չորրորդ, հինգերորդ և վեցերորդ գլուխներում շատ կարճ, բայց, միևնույն ժամանակ, շատ վառ կերպով նկարագրված է մարդկանց կյանքը Եդեմից վըտարվելուց հետո: Ամեն բան կատարվում էր առաջին անգամ. ոչ միայն առաջին սպանությունը, այլև առաջին երաժշտական միջոցները, առաջին գործիքները՝ պատրաստված փայտից, քարից և մետաղից, առաջին քաղաքները, առաջին զենքն ու առաջին պատերազմները:

Մեղքով ապականվելը արագընթաց կերպով տեղի ունեցավ: Այնպիսի արագընթացությամբ, ինչպես մարդկային ցեղը տարածվեց Երկրի վրա: Երբ Ադամի ու Եվայի որդիներից մեկը՝ Սեթը, ծնեց իր որդի Ենովսին, մարդիկ սկսեցին Տիրոջ անունը կանչել: Իր տեսակի մեջ կրոն առաջացավ: Մարդիկ սկսեցին փնտրել կորսված հաղորդակցությունն Աստծո հետ, սակայն Ադամի հետնորդների մեջ բարեպաշտ մարդիկ քիչ կային: Սեթի հետնորդներից Ենովքը սուրբ կյանք էր վարում:

Նա իր ողջ կյանքը նվիրեց Աստծուն ծառայելուն և Աստված վերցրեց նրան Իր մոտ. Ենովքը մահ չտեսավ: Մեկ այլ բարեպաշտ մարդ էր Նոյը: Նրա ժամանակներում Սեթի հետնորդները (Աստծո որդիները) սկսեցին ամուսնանալ մարդկանց աղջիկների հետ (մարդասպան Կայենի, բռնակալ Ղամեքի և առաջին զենք ստեղծող Թոբել-Կայենի հետնորդները) և բարեպաշտ մարդիկ չմնացին Երկրի վրա: Տեր Աստված ասաց. «Իմ հոգին մարդի վրա միշտ չմնա (նշանակում է, որ Աստծո որդիները մարդիկ էին, այլ ոչ հրեշտակներ կամ ավելի անհավանական ինչ-որ արարածներ, ինչպես համարում են ոմանք), այն պատճառով, որ նա մարմին է, այլ նրա նրա օրերը հարյուր քսան տարի լինեն» (Ծննդ. 6:3):

Աստված զղջաց, որ ստեղծել է մարդուն: Դա մարդկային ուղեղին անհասանելի է: Սակայն Իր անհասանելի ողորմությամբ Աստված մարդկանց ևս մեկ շանս տվեց. հարյուր քսան տարի ապագա դատի մասին ակնառու քարոզչություն Նոյ մարգարեի միջոցով, ով ողջ ժողովրդի աչքի առաջ կառուցում էր փրկության տապան իր ընտանիքի համար:

Բայց ինչպես ասաց Հիսուսը. «նրանք անգամ չէին մտածում…»: Անցավ հարյուր քսան տարի, որի ընթացքում տապանը կերպարանք էր ստանում, կառուցվում էին տախտակամածները և միջնորմները, մոնտաժվում էին աստիճանները և մթերվում էր անասնակերը: Իսկ մարդիկ կին էին առնում, մարդի էին գնում, կառուցում ու քանդում էին, թշնամանում ու հաշտվում էին, սպանում էին ու երեխաներ ծնում: Մինչև, Աստծո խոսքի համաձայն,

Նոյի ընտանիքը մտավ տապան՝ Տիրոջ հրամանով, վերցնելով ամեն տեսակի կենդանիներից մեկ զույգ, իսկ մաքուր կենդանիներից՝ յոթ զույգ: Եվ Աստված նրանց հետևից փակեց դուռը: Աստված Ինքը փակեց:

Փրկության տապանի այդ փակ դուռը, ինչպես և Քերովբեն՝ դրախտի փակված դարպասների առաջ, «Աստծո սարսափելի օրվա» խորհրդապատկերն է, երբ արդեն ոչ մի մարդու չնչին հնարավորություն անգամ չի մնա փրկություն ստանալու համար:

Եվ անձրև տեղաց: Այն տեղում էր, տեղում, տեղում… Ջուրը ծածկեց ողջ երկիրը, չմնաց որևէ բան, որից հնարավոր լիներ կառչել, ոչ մի սար, որտեղ կարելի լիներ բարձրանալ: Ոչի՛նչ: Անձրևը գալիս էր ու գալիս, իսկ տապանի պատերից ներս տաք էր, հարմարավետ և անվտանգ:

ԱՐԱՐԱՏԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԱԲԵԼՈՆ

«Եվ ՏԵՐԸ նրանց այնտեղից ցրեց ամբողջ երկրի երեսով մեկ...»:

Ծննդ.11:8

Որը հաջորդում էր օրվան, շաբաթը՝ շաբաթվան, ամիսները շարունակում էին միմյանց, իսկ անձրևը դեռ գալիս էր ու գալիս: Քառասուն օր ու գիշեր անդադար տեղում էր անձրևը և հինգ ամիս ջուրը բարձրացավ երկրի երեսից, մինչև ծածկվեցին բոլոր սարերը: «Եվ անդունդի աղբյուրները և երկնքի պատուհանները փակվեցին և անձրևը երկնքից դադարեց» (Ծնն. 8:2): Եդեմի պարտեզից Ադամի վտարումից մինչև մինչջրհեղեղյան քաղաքակրթության վերջը անցել է մի քանի հազար տարի: Նրանից ոչինչ չի մնացել, բացի հսկա տապանից, որով փրկվել է երկրի միակ բարեպաշտ մարդու ընտանիքը:

Բարձր ճռինչով տապանը նստեց Արարատ սարի վրա: Սակայն փրկարար տապանի շուրջը դեռ ջուր էր: Անցավ ևս մի քանի ամիս, մինչ Նոյն ու իր ընտանիքը կարողացան լքել տապանը: Աղավնին՝ ձիթենու ճյուղը կտցին, որ Նոյին լուր բերեց այն մասին, որ երկիրը չորացել է և շուտով մարդիկ կկարողանան լքել իրենց ապաստարանը, դարձավ խաղաղության խորհրդանիշը: Նոյն իր կնոջ հետ, Սեմը, Քամը և Հաբեթը իրենց կանանց հետ սկիզբ դրեցին նոր մարդկությանը և նոր՝ հետջրհեղեղյան քաղաքակրթությանը: Իսկ կենդանիները սարից իջան հովիտներ և սկիզբ դրեցին մոլորակի նոր կենդանական աշխարհին:

Զրհեղեղը սարսափելի աղետ էր, որ փոխեց Երկրի ողջ դեմքը: Այն, ինչ մենք տեսնում ենք հիմա, ինչով հիանում ենք և ինչը շոյում է մեր աչքը, ընդամենը Երկրի երբեմնի վեհության փշրանքներն են: Կրաքարային լեռները, որ անցյալի կենդանական և բուսական աշխարհի գերեզմաններն են, որոնց մնացորդները սեղմվել են մեծ ճնշման տակ, նստվածքների ստվար շերտերով, վկայում են հին աշխարհի բազմազանության և անասելի հարստության մասին: Մեր մեքենաները, գործարաններն ու ջերմաէլեկտրակայաններն աշխատում են նավթով և գազով՝ նախկին կենսոլորտի մնացորդներով: Երբ մարդիկ ինձ հարցնում են, թե ինչ եղավ հին աշխարհի մարդկանց , ես աշխատում եմ չմտածել այն մասին, թե ինչով եմ լիցքավորում մեքենաս և ինչով ենք ջեռուցում մեր տունը: Գիտության բազմաթիվ ճյուղեր զբաղվում են նախկին Երկրի՝ մեր նախնիների բնակության միջավայրի հետազոտությամբ:

Ամեն բան փոխվել էր. բնությունը, կլիման, օդի բաղադրությունը, ողջ շրջապատող աշխարհը: Նոյն ու իր որդիները պետք է ամեն բանին նորից սովորեին:

Փոխվել էր ամեն բան, բայց չէր փոխվել մարդու սիրտը: Երկնքում դեռ փայլում էր հիասքանչ ծիածանը, որպես Աստծո ուխտի նշան Երկրի նոր բնակչության նախահայրերի հետ, իսկ Քամը՝ նոյի կրտսեր որդին, արդեն խայտառակել էր հորը, հայրն անիծել էր թոռանը…

Այն ժամանակ շատ պարզ էին կյանքի կանոնները, Աստծո պատվիրանի պայմանները նոր

մարդկության հետ. ողջ կենդանական աշխարհը Տերը ենթարկել էր մարդուն և տվել նրան, որպես կերակուր, արգելել էր ուտել արյուն և մյուս մարդկանց հանդեպ չարություն անել՝ սահմանելով կյանք կյանքի դիմաց:

Շատ ժամանակ չէր անցել և գրեթե ողջ այն ժամանակ հայտնի աշխարհը, որ մենք հիմա անվանում ենք Մերձավոր Արևելք, արդեն բնակեցված էր Նոյի և իր որդիների սերունդներով: Արտասովոր ուժով, որսորդության մեջ հաջողությամբ ու իշխանությամբ աչքի ընկավ նրանցից մեկը՝ Նեբրովթը, որ Քամի թոռն էր: Նա հիմնեց առաջին թագավորությունը, որի մեջ մտնում էին Միջագետքի տարածքները:

Եվ մարդկանց այդ բազմությունը շարժվում էր դեպի Արևելք և բնակություն հաստատեցին Սենաարի դաշտում: Հետզհետե նրանց համար ավելի դժվար էր դառնում պահպանել շփումը միմյանց միջև, քանի որ ավելի ու ավելի հեռու էին ցրվում իրարից: Եվ միտք ծագեց. սեփական անունը հավերժացնել, սեփական մեծությանն ու ամենազորությանը հուշարձան կանգնեցնել: Նրանք որոշեցին աշտարակ կառուցել: Բարձրությամբ՝ մինչև երկինքը, մինչև Աստված: Ժողովրդի մեջ Եդեմական գայթակղությունն արձագանքեց. աստվածների նման կլինեք…

Նրանք արդեն չունեին քար կտրելու տեխնիկա և կորցրել էին քար շարելու կարողությունը, այդ իսկ պատճառով որոշեցին կավից աղյուսներ պատրաստել, վառարանում թրծել դրանք և… սկսեց եռալ ժողովրդական շինարարությունը:

Աստված երկար չսպասեց: Ճիշտ այնքան, որ նրանց հանդուգն երազանքի մնացորդները դեռ բազում հարյուրամյակներ զարմացնեն ճամփորդներին և Աստված խառնեց մարդկանց լեզուները և նրանք դադարեցրին կառուցումը: Դադարեցին կառուցել թե՛աշտարակը, թե՛ քաղաքը: Եվ այդ քաղաքը կոչվեց Բաբելոն: Որովհետև Աստված խառնեց բոլոր մարդկանց լեզուները և նրանք այլևս չկարողացան ոչինչ պայմանավորվել:

Եվ ահա, երկրակեղևի վերին շերտի պայմանների փոփոխության ազդեցության ներքո սկսվեց աշխարհամասերի տեղաշարժ. «…Նրա (Փաղեկի՝ Եբերի որդու, Նոյի որդի Սեմի թոռան) օրոք բաժանվեց երկիրը…» (Ծնն. 10:25): Եվ Նոյի հետնորդները տարածվեցին ողջ երկրի երեսին. Բաբելոնից մինչև Գրենլանդիա, Եգիպտոսից մինչև Ավստրալիա և բնակեցրին բոլոր այն կղզիները, որոնց կարողացան հասնել իրենց նավակներով:

Արարատ սարի վրա տապանը ծածկվում էր ձյան հաստ շերտով, Բաբելոնի աշտարակը մոտակա ցեղերի համար որպես շինանյութի աղբյուր էր ծառայում, իսկ աշտարակից փոքր ինչ հեռու՝ դեպի հարավ, հիասքանչ Ուր քաղաքում Թարան (Նաքովրի որդին՝ Սերուգի որդին՝ Փաղեկի որդին, որի ծնունդի ժամանակ բաժանվեց երկիրը) ծնեց Աբրամին: Երբ նա չափահաս դարձավ, Աստված որոշեց խոսել նրա հետ, ինչպես խոսել էր Ադամի, Ենովքի և Նոյի հետ… Սակայն սա արդեն Աստծո փրկության ծրագրի մյուս պատմությունն է:

ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

«Որովհետև ի՞նչ է ասում Գիրքը. «Աբրահամը հավատաց Աստծուն, և դա արդարություն համարվեց իրեն» »:

Հռոմ. 4:3

Զարմանալի ոչինչ չկա նրանում, որ Աստված ընտրեց Նոյին և նրա ընտանիքին, որպեսզի փրկի մարդկային ցեղը բնաջնջումից. նա միակ բարեպաշտ մարդն էր երկրի վրա: Սակայն մեզ մինչև վերջ հայտնի չէ, թե ինչով էր պայմանավորված Աստծո հատուկ դիրքորոշումն Աբրամի հանդեպ, մի մարդու, ով ապրում էր հնամենի խալդիական Ուր քաղաքում: Գիտենք միայն, որ Աստված հրամայեց նրան լքել հարազատ քաղաքն՝ իր հարմարություններով հանդերձ (դեռ այն ժամանակներում Ուր քաղաքում արդեն կային ջրագիծ, կոյուղի և բազմահարկ շենքեր), թողնել իր ազգականներին և գնալ իրեն անծանոթ մի երկիր:

Այն պահին, երբ Աստված կանչեց Աբրամին, տասը դար էր անցել ջրհեղեղի ավարտից, այսինքն, մոտավորապես այնքան, որքան այսօր մենք հաշվում ենք Ռուսիայի մկրտության օրերից: Ժամանակն անցնում էր, սերունդները փոխարինում էին միմյանց և չնայած այն հանգամանքին, որ կյանքի միջին տևողությունն այն ժամանակներում անհամեմատ բարձր էր, քան այսօր, մինչջրհեղեղյան ժամանակաշրջանի մասին հիշողությունը հետզհետե մարում էր՝ վերածվելով լեգենդների, առասպելների և բաբելոնյան խառնաշփոթից հետո երկիրը բնակեցրած տարբեր ազգերի կրոնական պատկերացումների:

Հայտնի է, որ Աբրամի հայրը կռապաշտ էր: Նա մահացել է Խառանում, ուր տեղափոխվել

էր որդու և թոռան՝ Ղովտի հետ: Թե ինչպես Աբրամի մեջ ծնվեց հավատը, մենք հավաստի տեղեկություններ չունենք, թեև այդ մասին ևս շատ լեգենդներ են հյուսվել: Հավատքի հոր՝ Աբրահամի անձը գաղտնիքներով է պարուրված ոչ միայն քրիստոնեության մեջ, այլև մյուս երկու համաշխարհային կրոնների՝ հուդայականության և մահմեդականության մեջ: Այն, ինչ մեզ անհրաժեշտ է իմանալ նրա մասին, գրված է Աստվածաշնչում: Իսկ Աստվածաշունչն Աբրահամին մեզ ներկայացնում է որպես Աստծո կատարյալ նվիրյալի, ում Հայտնվեց Աստված և կանչեց նոր՝ անհամար ազգի նախահայր դառնալու:

Հին ժամանակների պատմիչները Աբրահամի մասին գրում էին որպես մեկի, ով մեծ ազդեցություն ուներ շրջապատի վրա: Նրանք հաստատում են, որ նա եգիպտացիներին սովորեցրել է մաթեմատիկայի հիմունքները, փյունիկացիներին բացել է աստղագիտության գաղտնիքները և շատ այլ գիտություններ սովորեցրել: Բայց Աստծո խոսքը մեր ուշադրությունը կենտրոնացնում է այն փաստի վրա, որ Աբրահամը հավատաց Աստծուն և դա նրան արդարություն համարվեց: Աբրահամն իր սերունդներին, նշանակում է նաև մեզ, ցույց տվեց, որ կա միայն մեկ Աստված, Ում կանչված է երկրպագելու ամեն ոք, և որ իրական երկրպագությունն Աստծուն որոշվում է ոչ թե արտաքին ձևերով, այլ՝ հավատով:

Կանչվելուց և Քանան տեղափոխվելուց հետո Աբրահամը երկար տարիներ սպասում էր խոստացված զավակին: Նա արածեցնում էր իր հոտերը

և սպասում… Սպասում էր և հավատում Աստծուն: Անզավակ ծերունի լինելով, նա զոհասեղաններ էր շինում և երկրպագում էր իր Աստծուն, Ով խոստացել էր երկրի բոլոր ազգերն օրհնել իր սերնդի միջոցով: Ի նշան Աստծուն պատկանելու Աբրահամը թլպատեց իր ողջ ընտանիքին՝ դրանով իսկ հիմք դնելով հրեա ժողովրդի թլպատությանը:

Այդ ժամանակներում ողջ երկրում տեղի էին ունենում տարբեր նշանակալի իրադարձություններ. Ուրում՝ Աբրահամի հարազատ քաղաքում, կառուցում էին ժամանակի ամենավիթխարի տաճարային համալիր զիկկուրատը՝ Լուսնի աստվածության պատվին, Ամենհոտեպ փարավոնի զորքերը գրավել էին Նուբիան և Սինայի թերակղզին և եգիպտացիները սկսել էին այնտեղ նավթ և ձյութ արդյունահանել:

Սակայն, Աստծո Խոսքը հատուկ ուշադրություն է դարձնում Աբրահամի պատմությանը՝ մի սերնդի պատմությանը: Չնայած իր առաջացած տարիքին (նա այդ ժամանակ հարյուր տարեկան էր) Աբրահամն իր հավատով ստացավ երկար սպասված և Աստծո կողմից խոստացված իր որդուն՝ Իսահակին, ով հետևեց հոր օրինակին և հավատաց երկնքի և երկրի Արարչին: Իսահակի հավատը հաճելի էր Աստծուն և Նա Իրեն կոչեց «Աբրահամի և Իսահակի Աստված»:

Իսահակը երկվորյակներ ունեցավ՝ Եսավ և Հակոբ: Ավագ որդի Եսավը Աբրահամի ողջ հավատացյալ սերունդի համար օրինակ դարձավ, որ հեռու է պահում մեզ նման սխալներից. նա իր անդրանիկությունը վաճառեց ոսպով ապուրի

դիմաց, այդպիսով իրեն հեռացնելով Աստծո ծրագրին մասնակցելուց՝ ինչպես ողջ աշխարհի փրկության, այնպես էլ անհատի փրկության հարցում: Իսկ Իսահակի կրտսեր որդին՝ Հակոբը, Աստծո հրեշտակի հետ մենամարտում ստացավ նոր անուն՝ Իսրայել և Աստծո օրհնությունը: Նա դարձավ Աստծո ժողովրդի վերջին մեծ նախահայրը:

Հիշատակության է արժանի, որ Աստված Մովսեսին ծառայության կանչելիս նրան հայտնվեց հետևյալ խոսքերով. «Ես եմ քո հոր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը» (Ելից 3:6):

Իսկ մեր մասին Հիսուսն ասաց. «…Շատերը արևելքից և արևմուտքից կգան և կնստեն Աբրահամի և Իսահակի և Հակոբի հետ Երկնքի Արքայությունումը» (Մատթ. 8:11):

ԼՈՒՅՍ ՍԱՐԻ ՎՐԱ

«Ուրեմն հիմա վերացրե՛ք ձեր մեջ եղած օտար աստվածներին ու ձեր սիրտը դարձրե՛ք դեպի Իսրայելի ՏԵՐ Աստվածը»:

Հեսու 24:23

Եգիպտացիներից ոչ ոք չէր կարող ենթադրել, որ իրենց մոտ հանգրվանած քոչվորների փոքր ցեղն այնտեղ կմնար երկար ժամանակ: Աստված այնպես կարգադրեց, որ Հակոբի որդիներից մեկը՝ Հովսեփը, իր եղբայրների ձեռքով ստրկության վաճառվեց Եգիպտոս: Այնտեղ Աստված Հովսեփին դարձրեց փարավոնի խորհրդական՝ Եգիպտոսի երկրորդ մարդն իր իշխանությամբ: Հովսեփի հրավերով իր ողջ ցեղը տեղափոխվեց վարար գետից ոռոգվող բարեբեր մի հովիտ Նեղոսի դելտայում: Հիմա այնտեղ սփռված է Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեն:

Ողջ կյանքը վրաններում անցկացրած քոչվորներին, գետի մյուս ափին գտնվող՝ պատկառելի վախ առաջացնող վեհաշուք տաճարները, բուրգերն ու սվինքսները, թվում էին այլ աշխարհի ավետաբերներ: Տեղացիների վերաբերմունքն իսրայելացիների հանդեպ թեև փոքր-ինչ արհամարհական էր (ինչպես և բոլոր հովիվների հանդեպ), սակայն բարյացակամ և ներողամիտ. նրանք Հովսեփի ազգականներն էին:

Բայց անցան տարիներ և Հովսեփը մահացավ, իսկ իշխանությունն անցավ այլ փարավոնի: Հրեաները կամ իսրայելացիները, ինչպես այն ժամանակ սկսել էին կոչվել Հակոբ - Իսրայելի հետնորդներ, հայտնվեցին ոչ նախանձելի վիճակի մեջ. նրանք այլևս չէին կարողանում ազատորեն արածեցնել իրենց հոտերը եգիպտական դաշտերում, ամեն

բանի համար հարկավոր էր վճարել… Ժողովուրդը ստրկական կախվածության մեջ ընկավ Եգիպտոսի՝ Հին Աշխարհի քաղաքակրթության կենտրոնի, դաժան կառավարիչներից: Այդ ստրկությունը շարունակվեց ավելի քան չորս հարյուր տարի:

Չնայած նեղություններին և ստրկական աշխատանքին, իսրայելի ժողովուրդը աճում և ուժեղանում էր: Կանայք կոփված և ամուր էին, երեխաները՝ բազմաթիվ և առողջ: Եվ այդ ժամանակ փարավոնը հրամայեց հրեաների ընտանիքներում ծնված բոլոր տղա երեխաներին խեղդել գետում: Նույն ճակատագիրն էր սպասում նաև Հոքաբեդի և Ամրամի նորածին որդի Մովսեսին: Սակայն Աստված փրկեց նրա կյանքը և նրա համար որոշում կայացրեց՝ ապրել և դաստիարակվել հրեաների ոխերիմ թշնամի փարավոնի տանը:

Քառասուն տարի անց Մովսեսը ստիպված էր փախչել Եգիպտոսից: Նա հովիվ դարձավ Մադիամի երկրում: Այստեղ նա ամուսնացավ Սեպփորայի՝ Մադիամի քուրմ Հոթորի դստեր հետ: Քառասուն տարի նա անապատում ոչխար արածեցրեց: Սինա սարից ոչ հեռու Աստված հայտնվեց Մովսեսին այրվող մորենու միջից և կանչեց նրան՝ Իսրայել ժողովրդի առաջնորդը դառնալու: Այստեղ Աստված Մովսեսին առաջին անգամ հայտնվեց Յահվե անունով, այսինքն Գոյ: Մովսեսը լսեց Աստծուն և դարձավ նրա մարգարեն:

Եգիպտոս վերադառնալուն պես Մովսեսը պահանջեց Իսրայելի Աստծո՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծո անունից ազատել ժողովրդին: Փարավոնը (ամենայն հավանականությամբ

դա եղել է Թութմոս III փարավոնը) զայրացավ և չցանկացավ որևէ բան լսել ստրուկների և հովիվների Աստծո մասին: Տասը մահաբեր պատուհասներ պատեցին եգիպտացիներին, մինչև փարավոնը համաձայնվեց ազատել ժողովրդին: Վերջին աղետի՝ առաջնեկների հարվածի ժամանակ Աստված պահպանեց Իր ժողովրդին կործանումից՝ հրամայելով նրանց գառան արյուն քսել տան երկու կողմի դռանդիրներին և դռան շրջանակի վերին սեմին:

Այդ օրվանից հրեաները տոնում են Փեսախը կամ արամեերեն՝ Պասխան, որ բառացի նշանակում է «պաշտպանել, կողքով անցնել»: Այս բառը կապված է զատկի զոհի հետ և հիշեցնում է Բարձրյալի խոստման մասին. «…Երբ որ արյունը տեսնեմ, ձեր վրայից պիտի անցնեմ և հարվածը ձեզ վրա պիտի չգա ձեզ կորցնելու համար…» (Ել. 12:13): Զատկի գառը հինկտակարանյան հիմնական նախատիպն է Հիսուս Քրիստոսի միջոցով մարդկության փրկության, Ով բոլոր փրկագնվածների համար դարձավ մեր փոխարեն մահվան մատնված Գառ:

Ծովի միջով ցամաք անցնելը, անապատում բնաջնջումից հրաշքով փրկվելը, ժայռից բխող ջուրը, դառնահամ ջրերի մաքրվելը, մանանան երկնքից՝ պանդխտության քառասուն տարիների ընթացքում, այս և շատ այլ Ելիցի իրադարձությունները մտածել և իրագործել է Աստված, որպես Հիսուս Քրիստոսի շնորհիվ մեր փրկագնման նախատիպեր և խորհրդապատկերներ:

Երբ ժողովուրդը հասավ Սինա սարի մոտ, Մովսեսը բարձրացավ գագաթը՝ Աստծո հետ

անձնական հանդիպման: Աստված ուխտ կապեց Իր ժողովրդի հետ՝ տալով նրան Տասը պատվիրանները և կազմակերպելով նրանց կրոնական և հասարակական կյանքը այդ պատվիրանների, ինչպես նաև կանոնների, ծիսակարգերի, տոնակատարությունների և զոհաբերությունների օրացույցի միջոցով:

Այն ժամանակ, երբ Մովսեսն Աստծո ձեռքից ընդունում էր պատվիրանների քարե տախտակը, ժողովուրդը սարի ստորոտին պարում էր հասկանալի, շոշափելի, հասանելի և իրենց համար սովորական աստվածության՝ կուռքի շուրջ, որ Ահարոնի ձեռքով էր պատրաստված:

Կանցնի քառասուն տարի, մինչ Նավեյան Հեսուն՝ Մովսեսի սպասավորը և հաջորդողը, Իսրայելի ժողովրդին կառաջնորդի դեպի խոստացյալ երկիր: Այդ երկար տարիների ընթացքում կացարանի մեջտեղում՝ խորանի վրա, միշտ շողում էր լույսը, գիշերը գետնին էր թափվում երկնային կերակուրը՝ մանանան, իսկ Եգիպտոսից դուրս եկած հրեաների հագուստն ու կոշիկները չէին մաշվում: Նրանք Եգիպտոսից դուրս եկան ընդամենը մի քանի օրում, սակայն որպեսզի Եգիպտոսը դուրս գար նախկին ստրուկների սրտերից, պահանջվեց քառասուն տարի:

Աստված կատարեց նախահայրերին՝ Աբրահամին, Իսահակին և Հակոբին տված Իր խոստումը, նրանց ժառանգեց «կաթ ու մեղր բխող» երկիր:

ԽԱՌՆԱԿ ՀԱՁԱՐԱՄՅԱԿԸ

«...Ամեն մարդ իր աչքին հաճելի
եղածն էր անում»:

Դատ. 21:25

Ապոլլոնի տաճարի ավերակները

Դելփիքում քանդեցին Ապոլլոնի փայտե տաճարը և կառուցեցին քարից: Խեթերը արշավեցին Եգիպտոսի վրա: Չինաստանում փոփոխական հաջողությամբ պատերազմ էր ընթանում հին թագավորությունների միջև: Միկենայում շինարարական մեծ առաջընթաց է: Բայց այս բոլոր իրադարձությունները, ինչպես և շատ ուրիշները, ընդամենը ընդհանուր պատկերն են, որոնց ֆոնին տեղի է ունենում ամենակարևորը, որ կապ ունի ողջ մարդկության փրկության Աստծո ծրագրի հետ: Քանանի տարածքի վրա հիմնվում է Իսրայել պետությունը: Նրա մայրաքաղաքը մի փոքրիկ գյուղակ է, որտեղ կանգնած է վրանային տաճարը՝ բազմատոհմ ժողովրդի հոգևոր ու վարչական կենտրոնը:

Մովսեսի ղեկավարությամբ Իսրայելի ժողովուրդը դուրս եկավ Եգիպտոսից, Սինա սարի մոտ ստացավ օրենքը, քառասուն տարի պանդուխտ եղավ անապատում, մինչև մահացան ստրկությանը սովորած բոլորը, անհնազանդներն ու անհավատները: Մովսեսին փոխարինած Նավեյան Հեսուն բազմամարդ ժողովրդին առաջնորդեց «կաթ ու մեղր բխող» երկիր ՝ հզոր քաղաքներով, խոտավետ դաշտերով, թանձրախիտ անտառներով:

Բայց շատ հարյուրամյակներ անցան, մինչև իրարից անջատ ցեղերից (ըստ Աստվածաշնչի՝ սերունդ) մի ժողովուրդ կազմավորվեց: Նրա միավորմանը նպաստեցին բազմաթիվ թշնամիները,

որ շրջապատում էին Իսրայելին և հաճախակի հարձակվում դեռևս թույլ պետության վրա: Աստված տալիս էր ժողովրդին դատավորներ, ովքեր նրան հերթական անգամ ազատագրում էին և պատմական տեսանկյունից ինչ-որ աննշան ժամանակով խաղաղություն ու բարեկեցություն պարգևում: Սակայն այդ ողջ ընթացքում Իսրայելի գլխավոր թշնամիները կռապաշտությունն ու ամենուր տարածված սնահավատությունն էին: Ժողովուրդը մե՛կ վերադառնում էր Աստծո հանդեպ հավատին, մե՛կ նորից ընկնում էր անհեթեթ կռապաշտության մեջ:

Եվ ահա, Իսրայելը աստվածպետությունից վերածվեց միապետության. ժողովուրդը ցանկացավ թագավոր ունենալ «ինչպես մյուս ազգերը»: Անսահմանափակ իշխանությունը, հարստությունն ու թշնամիների հանդեպ հաղթանակներն առաջին թագավորի մոտ գլխապտույտ առաջացրեցին: Նա, անգամ, իր հուշարձանը կանգնեցրեց կենդանության օրոք: Աստված մերժեց նրան և թագավոր դարձրեց Դավթին: Նրա երգերով, սաղմոսներով ու մարգարեություններով պոետները, կոմպոզիտորներն ու քարոզիչները ոգեշնչվում են անգամ այսօր՝ երեք հազար տարի անց:

Դավթին հաջորդած հազար տարիների ընթացքում Աստծո ժողովուրդը շատ ցնցումներ ապրեց: Եվ միայն բաբելոնյան գերությունը իսրայելացիներին վերջնականապես ազատեց կռապաշտությունից: Կայսրություններն առաջանում և անհետանում էին. Ասորեստան, Բաբելոն, Մարաստան, Մակեդոնիա… Հռոմեացիները Մերձավոր Արևելքում

հաստատեցին իրենց կանոնները՝ ճնշելով հակառակորդներին: Ողջ կայսրության տարածքում ճանապարհներ կառուցվեցին, կապ հաստատվեց հսկայական տերության հատվածների միջև, բոլորի համար ընդհանուր օրենքներ մտցվեցին:

Հասավ ժամանակի լրումը: Եվ Աստված աշխարհ ուղարկեց Փրկչին: Ո՛չ Եգիպտոսում, ո՛չ Հռոմում, ո՛չ Աթենքում, այլ Հրեաստանի անհանգիստ գավառի փոքրիկ կեղտոտ քաղաքում, որ գտնվում էր հռոմեացիների ուշադիր վերահսկողության ներքո՝ բռնակալ արքա Հերովդեսի կառավարման օրերում: Բեթլեհեմ: Դաշտեր: Հովիվներ:

Եվ անմիջապես ինչ-որ պայծառ և ուրախալի հով փչեց մեզ վրա: Հույսի հովը՝ Դավթի որդին:

Բեթլեհեմ

ԺԱՄԱՆԱԿԻ ԼՐՈՒՄԸ

«Եվ Բանը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ... շնորհքով և ճշմարտությունով լիքը»:

Հովհ. 1:14

Ազովի ծովի մոտակայքում և Կովկասում հանգրվանում են ալանական ցեղերը՝ ներկայիս օսեթների նախնիները, Չինաստանում Սունների թագավորությունը բաժանվում է Հյուսիսայինի և Հարավայինի, Պերույում առաջանում է զարգացած մշակույթ՝ այն ժամանակների համար առաջավոր համարվող գյուղատնտեսությամբ, Հռոմեական կայսրությունը ծավալվում է մինչև Անգլիա և Հյուսիսային Գերմանիա՝ նվաճելով ողջ Հյուսիսային Աֆրիկան, Միջերկրական ծովի Արևելյան հատվածը և Միջին Ասիան: Ողջ կայսրությունում գործում են նույն օրենքները, գավառները կապված են մայրաքաղաքի հետ սալարկված ճանապարհների ցանցով: Հռոմում, առաջին անգամ պատմության մեջ, ապրում է միլիոնից ավելի բնակիչ… Բայց այս ամենը պատմական պատկերն է, որի ֆոնին տեղի է ունենում անհնարինը: Ժամանակից և տարածությունից դուրս գտնվող Աստված թողեց հավերժությունը, մտավ Իր իսկ ստեղծած Տիեզերք և դարձավ Մարդ:

Աշխարհը ստեղծելիս Աստված գիտեր, թե ինչ է Իրեն սպասում: Գիտեր, որ Իր ստեղծած մարդը կմերժի Իր կամքը, որպեսզի փորձի դառնալ այնիպիսին, ինչպիսին Ինքն է: Եվ Աստված գիտեր, թե Ինչ պիտի արժենար Իր սկզբնական նպատակին հասնելը, թե ինչ գին Ինքը ստիպված պիտի լիներ վճարել մարդու հետ շփման համար, ապրելով Իր աշխարհում՝ մարմնավորված, մարմնով, ժամա-

նակով և տարածությամբ սահմանափակված կյանքով, խաչելությամբ և անգամ մահով՝ անարգանքի և տառապանքի մեջ:

Դեռ փոքրիկ տղա լինելով նա կվազվզի Նազարեթի փոշոտ փողոցներով, կքնի կոշտ խսիրի վրա, կսնվի արհեստավորի խղճուկ կերակուրով, կաշխատի Իր ձեռքերով ու կշփվի մերժվածների հետ:

Իր հավերժական գոյության և Արարչի ու Հոր հետ անխզելի միության ամբողջական գիտակցումով տասներկուամյա Հիսուսը մի անգամ կասի Իր մորը. «Ինչու՞ համար էիք Ինձ որոնում, դուք չգիտեի՞ք թե պետք է, որ ես իմ Հոր տանը լինեմ» (Ղուկ. 2:49):

Նա մկրտություն կընդունի Իր ազգական Հովհաննեսից, որ Մկրտիչ է կոչված: Եվ կսկսի ծառայությունը Իր Արքայության քարոզով: Ամեն խոսքով, քայլով ու գործով Նա կկատարի մարգարեների ձեռքով Սուրբ Գրքում գրվածը: Չէ որ հենց Ինքն էր դրանից հարյուրավոր տարիներ առաջ ոգեշնչել նրանց գրել այդ ամենը, քանի որ գիտեր, ինչ է մտադիր անել:

Հարյուրավոր մարգարեություններ կատարվեցին Նրանով, Նրանում և Նրա միջոցով, որպեսզի ողջ աշխարհը տեսներ. Աստված մարմին հագավ: Եվ բնակվեց աշխարհում «շնորհքով և ճըշմարտությունով լիքը»: Նա ցույց տվեց Իրեն որպես տարերքների Տիրակալ՝ Իր խոսքով հանդարտեցնելով փոթորիկը: Նա հայտնեց Իրեն որպես հոգևոր աշխարհի վրա իշխանություն ունեցողի՝ հրամայելով դևերին, որ թողնեն իրենցից տանջվածներին և նրանք ենթարկվեցին Իրեն: Նա

հայտնեց Իրեն որպես կյանքի և մահվան Տիրակալ՝ հրամայելով մահացածին դուրս գալ գերեզմանից, կաթվածահարին՝ վեր կենալ և քայլել, բորոտին՝ մաքրվել, ի ծնե կույրին՝ տեսնել:

Նրա երկրային կյանքը խորագույն իմաստ է պարունակում: Նրա Հոգին խոսում է առաքյալի միջոցով. «Արդ որովհետև մանկունքն արյունի և մարմնի մասնակից եղան, Ինքն էլ շատ նման կերպով մասնակից եղավ նրանց. որ Իր մահովը խափանե մահի իշխանությունն ունեցողին, այսինքն սատանային: Եվ ազատե նրանց, որ մահի վախովն իրենց բոլոր կյանքի մեջ ծառայության մեջ բռնված էին» (Եբր. 2:14-15):

Հիսուսը Նիկոդեմոսին ասաց, որ վերստին ծնված չլինելով մենք չենք կարող Աստծո Արքայությունը տեսնել: Չենք կարող մտնել այնտեղ: Չենք կարող նրա քաղաքացիները լինել (Հովհ. 3 գլ): Վերստին ծնունդը հնարավոր է միայն այն պատճառով, որ Նա դարձավ Մարդ՝ մեզ նման, ծնվեց Աստծուց, որպեսզի մենք ևս կարողանանք ծնվել Նրանից՝ խաչի վրա կատարած Իր փրկարար զոհին հավատալով: Հիսուս Քրիստոսին հավատալով մենք դառնում ենք Երկնային Արքայության բնակիչներ, Աստծո էության մասնակիցներ և մտնում ենք Աստծո հանգստի մեջ, հավիտենության մեջ, յոթերորդ օրվա նախատիպի մեջ (Եբր. 4:3): «Ուր որ մեզ համար Առաջնորդ մտավ Հիսուսը…» (Եբր. 6:20):

Նա Իրենից հետո թողեց տասներկու աշակերտներին՝ պարզ, անուսում, ոչ դպիր, որ նրանք սկիզբ դնեին Եկեղեցուն՝ Տիեզերքի ստեղծման նպատակին:

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա և Իմ վկաները կլինեք Երուսաղեմումը և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ մինչև երկրի ծայրերը»:

Գործք 1:8

Ք. Հ. մոտ 30-ական թվականներ: Շաբաթվա առաջին օրը: Երուսաղեմում Պենտեկոստեի տոնի առավոտն է: Հրեական Շավուոթ տոնի կապակցությամբ քաղաքը լի է ուխտավորներով, հավաքվել է մոտ միլիոն մարդ: Տաճարի շուրջ, ուր ուխտավորները բերել են իրենց տասանորդները, ընծաները, զոհաբերություններն ու տաճարային հարկերը, խառնաշփոթ է: Բաբելոն: Հրեաներ ու նորադարձներ են ժամանել այստեղ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի տարբեր երկրներից: Խոսում են տարբեր լեզուներով: Տաճարի կարիքների գումարը անհրաժեշտ է փոխարինել շեկելով (դրամական միավոր, խմբ.)…

Ամառ: Շոգ: Փոշի: Գառների մայուն: Առևտրականների և դրամափոխների ձայները խառնվում են տաճարի ներքին բակից եկող երգերի, սաղմոսների և աղոթքների ձայներին: Պահակախումբը աչալրջորեն հսկում է, որ անթլպատներից ոչ ոք չմտնի հատուկ հրեաների համար առանձնացված սրբավայրը:

Փողոցներից մեկում ևս բազմալեզու և բազմագույն ամբոխ է հավաքվել: Մարդկանց գրավել է երկնքից եկող աղմուկը: Աղոթողների գլխին կրակի լեզուներ են: Քարոզողները գալիլիացի ձկնորսներն են՝ նազարեթցի խաչյալ Ռաբբիի աշակերտները: Բաբելոնյան անեծքի ավարտի նշանն է. հավաքվածները հասկանում են այն, ինչ ասվում է: Ամենքը իր լեզվով: Նոր դարաշրջան է սկսվում՝ Եկեղեցու ժամանակը: Այդ տոնը Եկեղեցու ծննդյան օրն է:

Աստված սկսեց մարդկության փրկության Իր ծրագրի ամփոփիչ փուլը Երուսաղեմի մի ձեղնահարկից: Շավուոթին՝ Սինա լեռան վրա Թորայի ընծայման տոնին, երբ քահանաները, որպես նվիրատվություն Աստծուն, Տաճար բերեցին թթխմորի հացերը, Աստված սկիզբ դրեց Իր Եկեղեցուն՝ բոլոր Իրեն հավատացողներին տվեց Սուրբ Հոգու պարգևը: Նրանց բոլորին դարձրեց Իր էության մասնակիցները, Իր զավակները և պատգամաբերները՝ Իր հարության վկաները:

Առաջին քարոզն է: Քարոզում է Պետրոսը, ով ուրացավ, զղջաց, ետ ընդունվեց և ուղարկվեց: Ունկնդիրների սրտերը դողդողում են. «Ի՞նչ անենք»: Բոլոր ժամանակների համար բարձրաձայն հնչում է պատասխանը. «Ապաշխարեցե՛ք: Եվ թող մկրտվի ձեզանից յուրաքանչյուրը Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և կստանաք Սուրբ Հոգու պարգևը »: Եվ ապաշխարում էին: Եվ մկրտվում էին Երուսաղեմում, Սամարիայում և մինչև աշխարհի ծայրերը: Եվ տարբեր կրոնների հումուսի վրա սկսեց աճել հիասքանչ, կյանքի նման զորեղ, գեղեցկուհի Եկեղեցին: Ով նա իրեն կոչեց «Աստծո ճանապարհ», իսկ նրա անդամները սկսեցին կոչվել «սրբեր», այսինքն ընտրվածներ և մաքրվածներ Տեր Աստծո համար: Նրանք կանգնեցին Աստծո ճանապարհի վրա և հետևեցին Նրան:

Հռոմում գեղեցկուհիներն առաջին անգամ սկսել են օգտվել ապակուց պատրաստված հայելուց: Չինաստանում կառուցվել է առաջին կախովի կամուրջը մետաղյա շղթաներից: Միացյալ Չինական պետությունը հաղթում է իր բոլոր թշնամիներին

և տարածվում է մինչև Կասպից ծով: Հռոմի Կլավ-դիոս կայսրն ապրում է միլիոնանոց բնակչությամբ քաղաքում…

Իսկ «Երուսաղեմից մինչև աշխարհի ծայրերն» են գնացել Քրիստոսի առաքյալները: Գնացել են այն լուրով, որ Աստված դեռ դարերի սկզբից է ծրագրել Իր Որդի Հիսուս Քրիստոսի գալուստն ու մահը, որպես բոլոր ժամանակների բոլոր մարդկանց մեղքերի զոհ: «Բայց Աստված տգիտության ժամանակներն անտեսելով, հիմա բոլոր մարդկանց պատվիրում է, որ ամեն մարդ ամեն տեղ ապաշխարի: Քանի որ Նա մի օր սահմանեց, երբ աշխարհն արդարությամբ պիտի դատի այն Մարդու ձեռքով, Ում Ինքը նշանակեց և ամենքին հավաստիացրեց՝ Նրան մեռելներից հարուցանելով» (Գործք. 17:30-31): Եվ մարդիկ սկսեցին ապաշխարել Ասիայում, Եվրոպայում, Աֆրիկայում:

Հարության վկաները սկսեցին գրի առնել իրենց տեսածն ու լսածը: Նրանք իրենց վկայությունը գրեցին Ավետարաններում և նամակներում: Այդ վկայության համար նրանք իրենց կյանքը տվեցին: Ոմանց խաչեցին: Մյուսներին գլխատեցին: Եվ երբ հարության անմիջական վկաներից վերջինը, միակ ողջ մնացածն, առաջին դարի վերջին, յոթ եկեղեցիներին ուղղված իր նամակում վերջակետ դրեց հետևյալ խոսքերից հետո. «Այս բաներին վկայողը ասում է. Այո՛. Ես շուտով գալիս եմ: Ամեն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը լինի ձեր ամենի հետ: Ամեն» (Հայտն. 22:20-21), այդ ժամանակ Աստված ավարտեց Իր հայտնությունը Եկեղեցուն և աշխարհին՝ նրան տալով Սուրբ Գիրքը:

Եվ տաճարն այրված էր ու ավիրված, Սրբության սրբոցը՝ ոտնահարված և կողոպտված: Եվ կատարվեց գրվածը. և «ձեր տունը ավերակ է թողվում ձեզ», իսկ «Երուսաղեմը հեթանոսներից ոտնակոխ կլինի, մինչև որ հեթանոսների ժամանակները կատարվեն» (Ղուկ.13:35, 21:24): Եվ չմնաց քար քարի վրա և հիմնահատակ ավիրեցին քաղաքը «…որովհետև չճանաչեցիր քո այցելության ժամանակը» (Ղուկ. 19:44):

Քրիստոսի վերջին առաքյալ Հովհաննեսի մահով ավարտվեց Նրա հարության վկաների ժամանակաշրջանը: Սակայն ըստ Պողոսի խոսքի մենք բոլորս հավատում ենք, որովհետև «Նրա զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացինք իր կարող զորության հաջողության պես, որ Քրիստոսումը գործադրեց՝ Նրան մեռելների միջից հարուցանելով, և իր աջ կողմը նստեցրեց երկնավորներումը» (Եփես. 1:19-20):

Հարության զորությունը Աստծո Եկեղեցու զորությունն է: Այդ զորությամբ է Եկեղեցին ապրում: Այդ զորությամբ զինված, Եկեղեցին դուրս է եկել Աստծո Արքայության համար մարդկանց հոգիներ շահելու, ողջ երկրի երեսին:

ԵՐԿՆՔՈՒՄ ԳՐՎԱԾՆԵՐԸ

«Այլ մոտեցել եք Սիոն սարին և կենդանի Աստծո քաղաքին, երկնավոր Երուսաղեմին և բյուրավոր հրեշտակներին և երկնքումը գրված անդրանիկների հանդեսին և եկեղեցուն և ամենի դատավոր Աստծուն և կատարյալ արդարների հոգիներին...»

Եբր.12:22-23

Հռոմի, Կարթագենի, Ալեքսանդրիայի և Զմյուռնիայի հրապարակներում ավազը ներկվում էր հալածված քրիստոնյաների արյունով, ովքեր հրաժարվել էին խոնարհվել կուռքերին, մեծարել կայսրերին և մասնակից լինել «խավարի անպտուղ գործերին» (Եփես. 5:11): Բայց Տերտուղիանոսի (մոտ 160-220-ից հետո) խոսքերով. «որքան շատ եք դուք մեզ կոտորում, այնքան ավելի ենք մենք շատանում, նահատակների արյունը քրիստոնեության սերմերն են» (Տերտուղիանոսի «Ապոլոգիա» (Զատագովություն, խմբ.) աստվածաբանական աշխատությունից):

Առաջին հարյուրամյակներում Հիսուս Քրիստոսի եկեղեցին աճում էր այնպես, ինչպես ասում էր նրա Հիմնադիրը. «Երկնքի թագավորությունը նման է թթխմորի, որ մի կին վերցրեց և երեք չափ ալյուրի մեջ հուցեց, մինչև ամբողջ զանգվածը խմորվեց» (Մատթ.13:33): Եկեղեցիները ստեղծվում ու աճում էին, չնայած անտիկ աշխարհի բոլոր երկրների հալածանքներին: Հիսուսի հետևորդները, առաքյալների ձեռքից ստանալով Բարի լուրի էստաֆետը, այն տարան «մինչև երկրի ծայրերը»՝ (Գործք 1:8) այն ժամանակ հայտնի բոլոր երկրները:

Ավանդությունն ասում է, որ Թովմասն Ավետարանը բերեց Հնդկաստան, Անդրեասը՝ Դնեպրի ափերը, Թադեոսն ու Բարդուղիմեոսը՝ Հայաստան… Ինչ էլ որ եղած լինի, մենք գիտենք, որ Ավետարանի քարոզիչները նրա լույսը հասցրել

են երկրի ամենահեռավոր անկյունները: Հարյուրամյակներ շարունակ երկրի վրա աճում էր կյանքի ծառը՝ Աստծո Արքայությունը: 301 թ. Հայաստանի Տրդատ III թագավորն, առաջին անգամ պատմության ընթացքում, քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն, Կոնստանդին կայսրը՝ ողջ Հռոմեական կայսրությունում 313 թ., վիկինգների թագավոր Հերալդը 965 թ. սկիզբ դրեց քրիստոնեությանը հյուսիսային ազգերի շրջանում, իսկ նրա ազգական իշխան Վլադիմիրը 988 թ. Կիևում «մկրտեց» Կիևյան Ռուսիան:

Սակայն Աստծո Արքայության գաղտնիքը նրանում է, որ յուրաքանչյուրը, ով ընդունում է Հիսուս Քրիստոսին որպես Տիրոջ և Փրկչի, դառնում է Աստծո բնույթի մասնակից (2 Պետ. 1:4), ձեռք է բերում հավիտենական կյանք (Հովհ. 6:47), դառնում է երկնքի քաղաքացի՝ (Փիլ. 3:20) նոր մարդկության անդամ, ոչ թե Ադամով, այլ Քրիստոսով (Հռոմ. 5): Աստծո Արքայության գաղտնիքն ու նրա հայտնությունը առաքյալներին և նրանցից հետո բոլոր հավատացյալներին նրանում է, որ մենք՝ հավատացյալներս, գործ ունենք երկնային Երուսաղեմի և երկնքում գրված անդրանիկների հանդեսի հետ (Եբր. 12:22-23), գործ ունենք Քրիստոսի Հարսի հետ, որին Նա «Հարույց Նրա հետ և Նրա հետ երկնավորներումը նստեցրեց՝ Քրիստոս Հիսուսումը»(Եփես. 2:6): Նա ապրում է մեզանում և մենք՝ Աստծո զավակներս, Նրա Արքայության բնակիչները, ապրում ենք Նրանում և Նրանով և Աստծո Արքայությունը՝ մեր մեջ և մեր միջոցով՝ այս աշխարհում:

Այս բոլոր դարերի ընթացքում, սկսված Պենտեկոստեի օրվանից, արյունալի հետապնդումների, զոհաբերությունների, «այն չար հոգիների հետ, որ երկնավորների մեջ են» (Եփես. 6:12) բազմադարյա խիզախ պայքարի միջոցով Աստված ստեղծում է Եկեղեցին՝ ողջ Տիեզերքի նպատակը:

«Եվ տեսա իբրև ապակեղեն ծով կրակով խառնված և նրանց, որ հաղթում են գազանին և նրա պատկերին և նրա դրոշմին և նրա անունի թվին, որ կանգնած էին ապակեղեն ծովի վրա և Աստծո քնարներն ունեին: Եվ երգում էին Աստծո ծառա Մովսեսի երգը և Գառի երգը ասելով. «Մեծ և զարմանալի են քո գործերը, Տեր Աստված Ամենակալ, արդար և ճշմարիտ են քո ճանապարհները, ով սուրբերի Թագավոր: Ո՞վ է, որ քեզանից չվախենա, ով Տեր և քո անունը չփառավորի. որ միայն դու ես սուրբ. վասնզի բոլոր ազգերը կգան և քո առաջին երկրպագություն կանեն, որովհետև քո իրավունքները հայտնվեցան» (Հայտն. 15:2-4):

«Եվ ցույց տվեց ինձ մի մաքուր գետ, կենդանի ջրի ակնվանու նման փայլուն, որ դուրս էր գալիս Աստծո և Գառի աթոռից: Եվ նրա հրապարակի միջումը և գետի այս կողմին և այն կողմին կյանքի ծառ կար, որ տասներկու կերպ պտուղ էր բերում, ամեն մեկ ամիս տալիս էր իր պտուղը և այն ծառի տերևը բժշկում էր հեթանոսներին: Եվ այլևս նզովք բնավ չի լինի և Աստծո և Գառի աթոռը նրանում կլինի և նրա ծառաները կպաշտեն նրան: Եվ նրա երեսը կտեսնեն և նրա անունը նրանց ճակատների վրա: Եվ գիշեր չի լինի այնտեղ և ճրագի և արեգակի

լույս պետք չէր նրանց, որովհետև Տեր Աստվածը լուսավորում է նրանց և կթագավորեն հավիտյանս հավիտենից» (Հայտն. 22:1-5):

Այդ ապագան իրական է այսօր Նրա բոլոր սրբերի՝ Հիսուս Քրիստոսին հավատացողների համար, որովհետև նրանք «այս երևող բաներին չեն մտիկ անում, այլ աներևույթներին. որովհետև երևողները ժամանակավոր են, իսկ չերևողները՝ հավիտենական» (2 Կոր. 4:18):

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՓՆՏՐՈՂԻՆ

Գուցե, դու արդեն բազմիցս խոստովանել ես մեղքերդ ու ներում հայցել Աստծուց, սակայն ամեն բան նույնն է մնացել: Դու գիտես, որ եթե ամեն բան մնա այնպես, ինչպես կա, դու կորած մեղավոր ես և քեզ սպասում են դժոխքի տանջանքները: Դու հուսահատվել ես և չգիտես՝ ինչ անել: Եթե այդպես է, ապա թույլ տուր քեզ մի քանի խորհուրդ տալ:

Բայց, նախևառաջ, մենք քեզ հետ կիստակեցնենք. մեր հավատքի, հոգևոր կյանքի յուրաքանչյուր դրսևորման համար հիմնական և միակ հեղինակությունը աստված ճանաչության մեջ Աստվածաշունչն է: Եվ միայն Աստվածաշունչը:

Աստվածաշունչը խոսում է Հիսուս Քրիստոսի բառերով. «…Ինձ մոտ եկողին ես դուրս չեմ հանի»

(Հովհ. 6:37): Հիսուսն Ինքն Իր մասին ասաց. «Որովհետև մարդի Որդին եկավ, որ գտնե և ապրեցնե կորածը» (Մատթ. 18:11):

Այսինքն, քո փրկությունը Հիսուս Քրիստոսի այս աշխարհ գալու նպատակն է, Նրա՝ խաչի մահով մահանալու և մեռելներից հարություն առնելու իմաստը: Իսկ դու ինչպե՞ս վարվես, որպեսզի մի խոստովանությունից մյուսը չքայլես տարեց տարի՝ չստանալով փրկության ուրախությունն ու ապագայի հանդեպ վստահությունը:

Քայլերը, որ ես խորհուրդ եմ տալիս քեզ, ավելի լավ է կատարել եկեղեցու ծառայողի կամ որևէ հասուն քրիստոնյայի ներկայությամբ: Եթե դու չես ճանաչում նման մարդկանց, ապա կարող ես նաև ինքնուրույն ապաշխարել:

Պողոս առաքյալն իր քարոզում ասում էր. «Բայց Աստված, տգիտության ժամանակներն անտես անելով, հիմա մարդկանց պատվիրում է, ամենին ամեն տեղ ապաշխարել» (Գործք. 17:30):

Ինչպե՞ս անել դա: Դու ծնկի ես գալիս և ասում (ի սրտե, անկեղծորեն, այլապես սկսելն անգամ իմաստ չունի):

«Տե՛ր իմ Աստված, ես գիտեմ, որ մեղավոր եմ: Ես ոչ միայն շատ մեղքեր եմ գործել, ես անգամ ամաչում եմ Քո առջև թվարկել իմ բոլոր մեղքերը, այլ ես իմ բնույթով ևս մեղավոր եմ, քանի որ հաճույքով եմ մեղանչել: Ողորմա՛ծ եղիր իմ՝ մեղավորիս հանդեպ: Ների՛ր բոլոր մեղքերս և մաքրի՛ր ինձ ամեն տեսակի անարդարությունից Քո ողորմությամբ: Տե՛ր Հիսուս Քրիստոս, շնորհակալ եմ, որ Դու Քեզ վրա

վերցրեցիր իմ բոլոր մեղքերը և վճարեցիր իմ փրկագինը ու մաքրեցիր ինձ: Շնորհակալ եմ Քեզ, որ Դու իմ մասին ասացիր. «...Ինձ մոտ եկողին ես դուրս չեմ հանի» : Եվ ես եկա Քեզ մոտ: Եվ ես ողջ սրտով հավատում եմ, որ Դու ինձ դուրս չես հանում, այլ ներում և ընդունում ես:

Շնորհակալ եմ Քեզ մեղքերիս ներման և հավիտենական կյանքի պարգևի համար: Ես հավատում եմ Քո Խոսքին: Դու Ինքդ ասացիր, որ Քեզ հավատացողներն ու ընդունողները հավիտենական կյանք ունեն և չեն դատվի, այլ փոխվեցին մահից դեպի կյանք: Շնորհակալ եմ Քեզ, Տե՛ր: »

Երկնավո՛ր Հայր, ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին, հավատում եմ Քո Խոսքին: Իսկ Դու Ինքդ ես ասել, որ Հիսուս Քրիստոսին ընդունողները դառնում են քո զավակները: Ես հավատում եմ Քո Խոսքին. Հիմա ես ևս Քո զավակն եմ: Այդ մեծ պատիվն ընդունում եմ մեծ ուրախությամբ ու երախտագիտությամբ:

Դու Քո Խոսքում ասել ես, որ Քեզ հավատացողները ստանում են Սուրբ Հոգու պարգևը: Ես հավատում եմ Քո այդ Խոսքին և խնդրում եմ Քեզ, հաստատվիր իմ սրտում Քո Սուրբ Հոգով հիմա և հավիտյան:

Քեզ եմ ընծայում իմ կյանքը և Քո կամքին՝ իմ բոլոր գործերը, մտքերն ու խոսքերը. ամեն բան Քեզ եմ հնազանդեցնում: Դու ես իմ Աստվածը, իմ Տերն ու Փրկիչը: Իմ կյանքը Քեզ է պատկանում հավետ:

Տե՛ր, Աստվա՛ծ իմ և Փրկի՛չ իմ, հրաժարվում եմ սատանայից և նրա իշխանությունից, նրա բոլոր գործերից ու այն ամենից, ինչ իմ կյանքում կապված էր նրա հետ: Տե՛ր, Դու ես իմ Սուրբ Աստվածը, Քեզ եմ հանձնում իմ կյանքն ու ընդունում եմ Քո կյանքը Քո փառքի համար: Ամեն:»

Եթե դու քո այս աղոթքում անկեղծ էիր, ապա ոչ մի կասկած չկա, որ Տերը կատարեց քո սրտի ցանկությունը: Հիմա դու Աստծո զավակն ես: Դու գիտես Նրա Խոսքը, որտեղ գրված է. «Բայց որոնք որ նրան ընդունեցին, իշխանություն տվավ նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ Նրա անունին հավատում են» (Հովհ. 1:12):

Խորհուրդ եմ տալիս քեզ, ուշադրություն դարձնել «Աստծո որդիներ լինելու իշխանություն» բառերին: Հիմա դու իշխանություն ունես. իշխանություն՝ մեղքի վրա, փորձությունների վրա և ինքդ քեզ վրա: Օգտվիր այդ իշխանությունից: Ինքդ քեզ սովորեցրու մտքերում, խոսքերում և գործերում ղեկավարվել միայն Աստծո Խոսքով, միայն Իր կամքով: Դա նման է նրան, թե ինչպես են ձիավորները վարժեցնում ձիերին՝ սովորեցնելով նրանց լսել հեծյալին և հնազանդվել սանձին: Այդպես դու կարող ես ենթարկել քո մարմինը՝ քո մեջ ապրող Սուրբ Հոգու զորությամբ: Եվ դու կնկատես, որ ժամանակի հետ բնավորությունդ ևս կսկսի փոխվել:

Որպեսզի չվատնես այդ ուժը, այլ հաստատվես հավատքի մեջ և վարժվես սրբությանը, խորհուրդ եմ տալիս ամեն օր Ավետարան կարդալ: Խորհուրդ

եմ տալիս ամեն օր կես ժամից ոչ քիչ ժամանակ հատ-կացնել ընթերցանությանը, գերադասելի է՝ ավելի շատ: Քեզ համար աղոթքի ժամ առանձնացրու: Խորհուրդ եմ տալիս հաստատուն ժամի աղոթել, որպեսզի ընտելացնես քեզ աղոթքի: Առավոտյան, ճաշին և երեկոյան աղոթելը լավ փորձ է: Ինչպես նաև, խորհուրդ եմ տալիս քեզ սովորել աղոթել սրտիդ մեջ բազում անգամներ օրվա ընթացքում՝ ամեն առիթով, ամեն հարցով: Քո հոգին քեզ շնորհակալ կլինի:

Հիմա ուզում եմ ևս մեկ շատ կարևոր խորհուրդ տալ քեզ. գտիր եկեղեցի, որտեղ քարոզվում է Ավետարանը, որտեղ երկրպագում են միայն Հիսուս Քրիստոսին (առանց հաղորդակցության հավատացյալը չի կարող գոյատևել) և մկրտվիր: Մկրտությունը որոշ չափով կարելի է համեմատել պսակադրության հետ: Մկրտության միջոցով հավատացյալը նույնանում է Հիսուս Քրիստոսի մահվան ու Նրա հարության հետ: Հիսուս Քրիստոսն ասաց. «Ով որ հավատաց և մկրտվեցավ կփրկվի և ով որ չհավատաց՝ կդատապարտվի» (Մարկ. 16:16):

Նա նաև պատվիրեց. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանց սովորեց-նելով, որ ամեն ինչ որ ձեզ պատվիրեցի՝ պահեն և ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհքի վերջը: Ամեն» (Մատթ. 28:19-20): Այսինքն, դու ծառայություն ունես՝ մարդկանց վկայելու այն մասին, ինչ Հիսուս Քրիստոսն արեց քեզ համար:

Ձեր հետագա հոգևոր աճի
համար կարող եմ առաջարկել միանալու
որևէ եկեղեցու, որտեղ քարոզվում է
Ավետարանը և երկրպագում են
Հիսուս Քրիստոսին:

Եթե ունեք հարցեր, գրեք մեզ
sureno77@yandex.ru,

Skype. *Sureno1977*
հասցեներով